ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 12

22 հունվարի 2020 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Օլյա Շիրակի Մանուկյանի (ծնված 22.05.1935 թվականին) կողմից դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի 4-րդ փողոց թիվ 16 հասցեում գտնվող հողամասի ընդհանուր մակերեսը այժմ կազմում է 0,08477 հեկտար /հատկացվել է 0,125 հեկտար/, որը Օլյա Շիրակի Մանուկյանի (ծնված 22.05.1935 թվականին), Հովհաննես Վաղարշակի Մանուկյանի ծնված 25. 05. 1969 թվականին սեփականության իրավունքով հողամասն է /հիմք հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 28.01.1991թվականի N1 որոշում և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր/:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը մայիսի 15-ը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի 4-րդ փողոց թիվ 16 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի ներառված Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով ***որոշում եմ***

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի 4-րդ փողոց թիվ 16 հասցեում գտնվող գույքային իրավունքների նկատմամբ սեփականության իրավունքը Օլյա Շիրակի Մանուկյանի (ծնված 22.05.1935 թվականին) և Հովհաննես Վաղարշակի Մանուկյանի (ծնված 25. 05. 1969 թվականին) բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար օրինական հատկացված 0,08477 հեկտար մակերեսով հողամասի չափով ճանաչել նրանց սեփականությունը և դրա վրա գտնվող մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շենք-շինությունների նկատմամբ:
2. N 4 շինությունը թողնել ինքնակամ:
3. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 16-ի N 361 որոշումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվական հունվարի 22

քաղաք Մարալիկ